Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ՍՃ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 19. Սյունիքի մարզ – ճաշարան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023-31.12.23թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2023-- 31.12.2023թթ |
| **Ներկայացման օր** | 19.12.2023թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2023.12.19
22:13:42 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում Սյունիքի մարզի Կապան համայնքում գործող ճաշարաններում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 75 շահառու և Արցախից տեղահանված 13 անձ:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրվել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում 37 շահառու ուղղորդվել է այլ կառույցներ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է դասընթաց առողջ ապրելակերպ վարելու վերաբերյալ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
    - հոգեբանական աջակցության կարիք ունեցող 22 շահառուի համար հոգեբանի կողմից կազմակերպվել են խմբային աշխատանքներ, որոնք միտված են եղել բացասական հույզերի, խմբում դրսևորվող կոնֆլիկտների հաղթահարմանը, սթրեսի կառավարմանը, կանխարգելմանը և վերահսկմանը:

- շփման և զբաղվածության կարիք ունեցող շահառուները մինչ ճաշը կամ ճաշից հետո մնում են կենտրոնում, շփվում միմյանց հետ, ըստ հետաքրքրությունների ձևավորում խմբակներ: Հաշվետու ժամանակահատվածում Սյունիքի մարզի Կապան համայնքի ճաշարանի 42 շահառուներ իրենց առօրյան անցկացրել են նկարչական, ասեղնագործության, շաշկու և ջյուղագործության խմբակներում:
- ճաշարանի շահառուների համար կազմակերպվել է թվով 5 միջոցառում («տարեցների միջազգային օր», «աշնան վերջին օրեր», «երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված միջոցառում», Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային օր, շահառուի ծննդյան օրվա նշում, Նոր տարի), որոնց մասնակցել է թվով 96 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- «Երկրաշարժի զոհերին նվիրված միջոցառում» (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ofnvd),
- «Աշնան վերջին օրերը» (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ofnwj),
- Առողջ ապրելակերպի հիմունքներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ofnxb**),**
- «Իմ փորձը ձեր ապագան է» խորագրով միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ofnyz),
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0z9Fc48MFumK6zx46xQb8mjSeeDDK2noi2Edu3nqSapnR13jHJDdn93um7rFVXHvvl&id=100066851298163):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը մասնակցել է Սիսիանի ՄՍԾՏԿ-ում կայացած համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվում են համայնքի նպաստառու չհանդիսացող, սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը, կայացվում՝ համապատասխան որոշումներ:
- Աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար Կապան և Սիսիան համայնքի բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Էթիկական կոդեքս» և «Անձնական տվյալների պաշտպանություն» թեմաներով դասընթացներին:
- Սոցիալական աշխատողները մասնակցել են «Մարդը կարիքի մեջ» ՀԿ–ի կողմից կազմակերպված կարողությունների զարգացման դասընթացին հետևյալ թեմաներով՝ «Հաջողակ դրամաշնորհի մշակում», «Ռազմավարական հաղորդակցություն», «Շահերի պաշտպանություն և քաղաքական երկխոսություն»:

2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ՍՃ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 52 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 39 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 33 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 36 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 75 |
| 3. | Այլ ծառայություն (*նշել*) Ազատ ժամանցի կազմակերպում | 30 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան ______________________

«19» 12 2023 թ